ԱՐԵՇԻ ԲԱՐԲԱՌԸ

ՌՈՒԲԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Մեծ Ուտիքի կենտրոնում, Կուր գետի ձախ ափին, Արեշ գավառի արևմտյան սահմանում մինչև 1918 թ. կային յոթ հայկական գյուղեր՝ Մանասուրի, Քյանդակ, Հավարիկ, Մաղրղու, Խանավադ, Մամադթավա, Արեշ. այժմ հայեր կան միայն Մամադթավա (Խալղանի շրջան) և Նամեթարադ (Եվլախի շրջան) գյուղերում։ Այս գյուղերի խոսվածքներով գրականություն չկա. խոսվածքները ներկայացնում են մի կուռ ամբողջություն, մեկ ինքնուրույն բարբառ։

Արեշի գավառի խոսվածքների մասին տեղեկություններ գտնում ենք Ս. Ջալալյանի և Մ. Բարխուդարյանի աշխատություններում[1]. առաջինը Գր. Տեր-Պողոսյանն էր, որ ի հայտ բերեց այս բարբառը, ցույց տվեց նրա ինքնուրույնությունը և ենթարկեց ուրվագծային նկարագրության, որի մի փոքր հատվածն է լույս տեսել[2], երկրորդ ուրվագծային ուսումնասիրությունը կատարել է ակադ. Ա. Ղարիբյանը[3]. մեր ուսումնասիրությունը կատարված է տեղում 1940-ական թվականներին, որ կազմում է մեր դիսերտացիոն անտիպ աշխատության մեկ գլուխը[4]։

Քննվող բարբառը հայագիտությանը հայտնի է երկու անունով՝ Հավարիկի և Արեշ-Հավարիկի. առաջին անունը կնքել է Գր. Տեր-Պողոսյանը, որ Հավարիկցի էր, իսկ երկրորդը՝ Ա. Ղարիբյանը՝ նպատակ ունենալով ընդգրկել բարբառի բոլոր խոսվածքները։

Մեր որոնումները ցույց տվեցին, որ տեղիս խոսվածքներն իրենց հիմնական հատկանիշներով ընդհանուր են. ահա խոսվածքային տարբերություններից մի քանիսը.

1. Ապառնի դերբայը բոլոր խոսվածքներում կազմվում է անորոշի հիմքի վրա ավելացնելով տարբեր վերջավորություններ. այսպես՝ գընալական՝ գնալու, խինդալական՝ խնդալու, ջրելական՝ ջրելու— Նամեթարադում և Խանավադում, գընալացուկ, խինդալացուկ, ջրելացուկ—Հավարիկում, գընալացու, խինդալացու, ջրելացու—Մաղրղուում։

2. Հավարիկի խոսվածքում շատ ավելի, քան մյուս խոսվածքներում զարգացած է ձայնավորների ներդաշնակության օրենքը։

---

1 Ս. Ջալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Տփղիս, 1858, Մ. Բարխուդարյանց, Աղվանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893։

2 Գր. Տեր-Պողոսյան, Հավարիկի բարբառ («Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», Ա—Բ, 1921—1922)։

3 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953։

4 Р. Баграмян, Армянские диалекты в Азербайджанской ССР (автореферат), Тбилиси, 1969.

3. Քյանդակի խոսվածքին հատուկ է այսպես կոչված ձիգ արտասանությունը, որ շատ հստակ դրսևորվում է էական բայի ձևերում։

4. Օժանդակ բայի անցյալի ձևերը Հավարիկում լինում են յ-ով՝ (յ)էյ, (յ)էյր, (յ)էր և այլն, Նամեթաբադում և մյուսներում՝ սովորական ձևով՝ էյի, էյիր, էր։

Խոսվածքային տարբերությունները քանակով քիչ են, ուստի ավելի ճիշտ կլիներ բարբառը կոչել գավառի՝ Արեշի, անունով։

Արեշի բարբառում գտնում ենք 40 հնչույթ, որից ձայնավոր են 11-ը՝ ա, ա̈, օ, ȣ, ու, ու̈, ը, ը̂, ի՝, ե, ի. իսկ բաղաձայն՝ 29-ը. ֆ-ի փոխարեն գործ է ածվում փ. օրինակ՝ փroնտ «ֆրոնտ՝ ռազմաճակատ», փorմա «ֆորմա՝ ձև», փէրշել «ֆելդշեր՝ բուժակ», փայտոն «ֆայտոն՝ կառք». երկբարբառներ չկան[5]։

Կան ō, ē երկար հնչման օ, է ձայնավորներ, որոնք պատահում են հազվադյուտ օրինակներում. բēլ՝ բերել, հարկōր՝ հարկավոր, գբլիōր՝ գլխավոր. պատահում են նաև գ՚. կ՚, ք՚, ղ՚, լ՚ քմային բաղաձայններ. օրինակ՝ կ՚ȣտուկ գոտի, ուզ՚ել՝ ուզել, լ՚եղի՝ լեղի, որոնք, սակայն, հնչույթային արժեք չունեն։

Ի՝-ն թեթև հնչման ը է, նույնը, ինչ Շամախիի, Մարաղայի, Մեղրու բարբառներում, ը̂-ն ռուսական հնչման ը է (ы), որ լինում է միայն շեշտված վանկում, օրինակ՝ ȣը̂նգ՝ ȣտնկ, կնը̂գ՝ կնիկ՝ կին, կոը̂վ՝ կոիվ, սը̂րտ՝ սիրտ։

Արեշի բարբառում ձայնավորների հնչյունափոխությունը խիստ չէ, որովհետև շեշտը հասարակ՝ բառային է, սուր չէ։

Ա ձայնավորը սովորաբար մնում է անփոփոխ, բայց քմայնանում է երեք դեպքում՝ ձայնեղ պայթական և կիսաշփական բաղաձայնների հաջորդելիս, եթե բառը ուշ շրջանի գրական կամ օտար փոխառություն չէ. օրինակ՝ բահ>բա̈հ, բամբակ>բա̈մբա̈կ, դաս>դա̈ս, խնդալ>խի՝նդա̈լ, բառակազմի կից վանկի թեթև ձայնավորի ներդաշնակությամբ, օրինակ՝ բարակ>բա̈ր̈ա̈կ, դանակ>դա̈նա̈կ, դիմանալ>դը̂մանալ>դա̈մա̈նալ, կորդալ>գա̈ր̈դալ, հանդարտ>հա̈նդա̈ր̈տ, և, վերջապես, անկանոն կերպով, օրինակ՝ հարևան>հա̈ր̈ա̈վա̈ն, աշկարայ>ա̈շկա̈ր̈ա̈, ապրայ>ա̈բր̈ա̈, կարհնալ>կա̈ր̈ա̈նալ, ճանկ>ճա̈նգ, թառ>թա̈ռ և այլն։

Ե ձայնավորը սովորաբար մնում է անփոփոխ, միայն բառասկզբում, ինչպես շատ բարբառներում և դրական լեզվում, ընդհանուր-պատմական հնչյունափոխությամբ դառնում է յե, օրինակ՝ երթալ>յէրթալ, երկիր>յէրգիր, եկեղեցի>յէղէցի, եզն>յէզ, երգ>յէրք, երինջ>էրինջ, երկայն>էրկան, իսկ ձայնավորների ներդաշնակության օրենքով կարող է դառնալ ա, ա̈, ու, օրինակ՝ երանեակ>հա̈ր̈ա̈նա̈կ, վերայն>վա̈ր̈ա̈ն, եղունգն>ուղունգ, սկեսար>իսքուսուր, լեզու>լուզու, կամ էլ ը, ը̂ օրինակ՝ մեխակ>մըխակ, հրեշտակ>հրը̂շտակ, տաշեղ> տաշը̂ղ, զկիռ>զկը̂ռ։

Ը-ն անհնչյունափոխ ձայնավոր է, բայց նկատելի է, որ բառասկզբում, ա̈-ից առաջ ջնջվում է, օրինակ՝ ընդ այն>դէն, ընդ որ>թոր, բառավերջում, ի տարբերություն հին հայերենի, ստեղծվել են ը-ով ձևեր, օրինակ՝ ակն>ակը,

---

5 Կր. Տեր-Պողոսյանը նշում է 15 երկբարբառ՝ աւ, եա, եւ, իւ, իվ և այլն, որոնք նրա մայրենի խոսվածքում էլ չկան։

արիւն>յէռնը, եօթն>էխտը, տասն<տասսը և, վերջապես, ձայնավորների առնմանության օրենքով ը-ն դառնում է ու, ու, ի, օրինակ՝ գլուխ>գուլօխ, բրդել>բուրդէլ. դրութիւն>տուրութուն, ինձոր>խունձուր գրել>գիրէլ, խնոցի>խինէցի, ստիպել>իստիպէլ, տագր>տէգիր։

Ի-ն նույնպես անվոփոխ է, միայն կից վանկի ու, ու, օ ձայնավորների ազդեցությամբ դառնում է ու, ու, օրինակ՝ սիրուն>սուրուն, ճիպուռ>ճիպուռ>ճուպուռ, մոխիր>մօխուր, թոնիր>թօրուն, իսկ շեշտված վանկում մեծ մասամբ անկանոն կերպով դառնում է ը, օրինակ՝ խիժ-խըժ, կիթ-կըթ, ծին-ծըն, կծիկ-կըծըկ, կռիւ>կըռըվ։

Ո ձայնավորը սովորաբար մնում է անհնչյունափոխ. օրինակ՝ ոստ>օստ, ոտն>օտ, թոռն>թօռ, բողկ>բօխկ, ոսկի>օսկի, որոտալ>օրօտալ, ողողել>օղօդէլ, խմոր>խումօր, կոտորել>կօտօրէլ, առողջ>առողճ, որս>հօրս, որթ<հօրթ, բայց երբեմն, անկանոն կերպով դառնում է օ, ու, օրինակ՝ չոր-չՅր, ծոմ>ծում, կորիզ>կօրինձ, դորակ>դՅրակ։

Ու-ն նույնպես մնում է անփոփոխ, միայն բազմաթիվ օրինակներում ձայնեղ պայթականներից ու կիսաշփականներից հետո, ինչպես նաև կից վանկի թեթև ձայնավորի ազդեցությամբ դառնում է ու. օրինակ՝ բուրդ>բուրդ, դուրս>դուս, ձուկն>ձուգ, ջուր>ջուր. ուրբաթ>ուրբաթ, թաթուլ>թանթուլ, շուշան>շուշան։

Ինչպես բոլոր բարբառներում, այս բարբառում նույնպես գրաբարյան երկբարբառների տեղում գտնում ենք պարզ ձայնավորներ, այսպես՝ այ>է, աւ>օ, իւ>ու, ոյ>ու, ու, ի, եա>է, ա։

Ձայնեղ պայթականներն ու կիսաշփականները բառակազմի բոլոր դիրքերում սովորաբար մնում են անփոփոխ, միայն գրական բառերում, որպես ուշ շրջանի փոխառություններում, պահպանվում են գրական ձևով, օրինակ՝ երգ>յէրք, որդի>վօրթի, զարդարել>զարթարէլ։

Խուլ պայթականներն ու կիսաշփականները նույնպես մնում են անհնչյունափոխ, միայն բառակազմի ռնգայինից հետո և ձայնեղ բաղաձայնների ազդեցությամբ դառնում են ձայնեղ, օրինակ՝ ընկեր>հինգէր, թիկն>թինդը, խունկ>խունդ, ընտրել>հընդրուէլ, ճանճ>ճանջ, դէպի>դիբի, գիտենալ>գիդանալ, դատ>դադ, իսկ շնչեղ խուլերի և ս, շ խուլ շփականների մոտ դառնում են շնչեղ խուլ. օրինակ՝ կթել>քըթէլ, քակոր>քաքուռ, ցայտ>ցէթ, օգուտ>օքուտ, թատրոն>թաթրօն, կշիռք>քըշէռք, կշտանալ>քուշտանալ, պսակ>փբսակ։

Մյուս բաղաձայնները սովորաբար պահպանվում են անփոփոխ, սակայն նկատելի է, որ՝ 1. բարբառային ս, շ, խ, թ բաղաձայններից առաջ f-ն դառնում է կ. բարբառային խ-ից հետո ց-ն շրջվում է ծ-ի, թ-ն՝ տ-ի, 2. բարբառային խուլ կամ շնչեղ խուլ բաղաձայնների առնմանությամբ ղ-ն դառնում է խ, 3. շ-ից առաջ և նրա տարնմանությամբ խ-ն դառնում է ղ, օրինակ՝ իշխան>իշղան, աշխատել>աշղատէլ, նշխար>նըշղարք, իսկ ղ-ի տարնմանությամբ՝ հ. օրինակ՝ խաղ>հաղ, խաղաղ>հաղաղ, խեղճ>հէղճ, 4. r-ից հետո հ-ն ընկնում է, 5. ընկնում է նաև բառավերջի հավելվածական հ-ն, 6. r-ն երբեմն դառնում է ռ, 7. ձայնավորներով սկսվող բառերում հավելվում է հ, 8. բառակազմի շ, f բաղաձայններից առաջ ավելանում է ն, իսկ նr հնչյունախմբում՝ դ (նr>նդr), մr խմբում՝ բ (մr>մբr), 9. թ-ից, մասամբ

նաև պ-ից, փ-ից առաջ գտնված մ-ն դառնում է ն, օրինակ՝ բամբակ>բանբակ։

Անունների հոգնակի թիվը կազմվում է միօրինակ էր մասնիկով. արջ>արջէր, հաց>հացէր, ձու>ձուէր, տուն>տունէր, տարի>տարիէր, դերեզման>գէրէզմանէր, լեզու>լուզի>լուզիէր, տախտակ>տախտակէր, բարեկամ>պարիկամ>պարիկամիէր. առանձին բառերի համար գործածական են f (տղա>տըղէք, եղբայր>աղբէր>աղբէրք, երեխայ>արախա>աբախէք), էրf (շէն>շին «գյուղ»>շինէրք), ուf, ունf, ըf, անըf, իf, էէf, տունf մասնիկներ։ Ստացականների հոգնակին կազմվում է յուրահատուկ ձևով. գոյականի հոգնակի ձևին ավելացվում է ան միջածանցը, ապա՝ հոդը. այսպես՝ տէղէրանիս՝ մեր տեղերը, տեղներս, յէխաէրանին՝ նրանց օձիքները։

Անձնանունների և անձ ցույց տվող բառերի սեռական, տրական և հայցական հոլովները նույնաձև են. նույն ձևն ունեն նաև իրի անունների ուղղականն ու հայցականը։ Համայնապարփակ հոլովումն է ի-ն. հազվագյուտ օրինակներ կան ա, ո հոլովումների համար, իսկ մյուսները վերացել են։

Սեռականը հոդ է ստանում, օրինակ՝ օխշարին կիշտը՝ ոչխարի մոտ, ծառին կատարին՝ ծառի կատարին, շինին տունէրը՝ գյուղի տները, տարիյին թիվը՝ տարվա թիվը՝ տարեթիվը։ Բառակապակցություններում հանդիպում են անհոդ սեռական ձևեր. փէտա հՕջուլ՝ փայտի ոջիլ՝ փայտոջիլ, օղձա յաղու՝ օձի թույն, յէզա ճըկատ՝ եզան ճակատ։

Բացառական հոլովը կազմվում է ուղղական հիմքով և ան վերջավորությամբ՝ իրի անունների համար կամ տրական հիմքով և (ն)ա՝ վերջավորությամբ՝ սովորաբար անձ ցույց տվող բառերի համար. օրինակ՝ շունան՝ շնից, հացան՝ հացից, աստանա՝ աստծուց, ժողովուրթիննա՝ ժողովրդից, մարդանա՝ մարդուց, հացէրիննա՝ հացերից։

Գործիականը կազմվում է օ, իսկ ներգոյականը՝ ըմ վերջավորությամբ. այսպես՝ օրէնքօ՝ օրենքով, ծէլիյօ՝ ածելիով, քանդօլօ՝ քանդելով, դՕրակիրօ՝ դորակներով՝ սափորներով. շինըմը՝ շենում՝ գյուղում, ձէքըմը՝ ձեռքում, յէզիցինըմը՝ եկեղեցում։

Անորոշ դերբայն անցնում է ա հոլովման, ընդ որում սեռական, տրական, հայցական և բացառական ձևերը միօրինակ են. այսպես՝ գնալը, գնալան, գնալը, գնալըմ։ Ահա հոլովման ընդհանուր պատկերը.

ուղղական՝ քար, կօվ՝ կով, ամիս, ձէք՝ ձեռք, ձի, խնամի, մարդ, դուռ, կընՋկ՝ կին, աղբէր՝ եղբայր.

սեռ.-տր. քարին, կօվին, ամիսին, ձէքին, խնամիյին, մարդին, դուռին, կնըկին, աղբէրին (հոգնակի՝ քարէրին, ձէքէրին, ձիյէրին, խնամիյէրին, մարդէրին կամ մարդըքօցին, կնանըքին կամ կնանըքօցին, կնըկէրին, աղբէրտօնցին կամ աղբէրունքին, աղբօրքօց).

բացառական՝ քարան, կօվան, ամիսան, ձէքան, ձիյան, խնամիյան. մարդիննա կամ մարդան, դուռանա, կնանըքիննա, աղբէրիննա.

գործիական՝ քարօ, կօվօ, ամիսօ, ձէքօ, խնամիյօ, մարդօ, դուռօ(վ), կնըկօ, աղբօրօ կամ աղբէրօ.

ներգոյական՝ ամսըմը, մարդըմը (հոգնակի՝ ձէքէրըմը, մարդըքօցըմը)։

Դասական թվականները կազմվում են ըմջի կամ ինջի օտարամուտ ածանցով, օրինակ՝ մինիմջի՝ առաջին, յարկուըմջի՝ երկրորդ, իննինջի՝ իններորդ։

Արեշի բարբառում անձնական դերանունները, ցուցականների արմատական ձևերը և հարցական-հարաբերական ով՝ ով դերանունը մնում են դերանվանական հոլովման. ահա դրանց ընդհանուր պատկերը.

ուղղական՝ յէս՝ ես, դու՝ դու, ինքը՝ ինքն, մէնք՝ մեք, դուք՝ դուք, սա, տա՝ դա, նա, հով՝ ով.

սեռական՝ իմ, քու, ուրան, մէր, ձէր, սարա, տարա, նարա, հում կամ հուր.

տրական՝ ինձ(ի), քէզի կամ քի, ուրան մէզ, ձէզ, սարա(ն), տարա(ն), նարա(ն), հում||հուր.

բացառական՝ ինձանա կամ ինձ(ի)նա, քէզ(ա)նա կամ քիանա, մէզ(ա)նա, ձէզանա, ուրաննա, սարանա, տառնա, նուռնա կամ ինանան, հուր(ա)նա.

գործիական՝ ինձ(ա)նո, քէզ(ա)նո, կամ քիյանո, մէզ(ա)նո, կամ մէզնէտ, ձէզանո կամ ձէզնէտ, ուրանո, սառնո, տառնո, նառնո, հուր(ա)նո,

ներգոյական՝ ինձ(ա)նում, քիյ(ա)նում, մէզ(ա)նում, ձէզ(ա)նում, ուրանումը, սառնումը, տառնումը, նառնումը, հուրանում։

Հոլովվող մյուս դերանուններն անցնում են անվանական հոլովման, օրինակ՝ ուղղական՝ սահանք՝ սրանք, տահանք՝ դրանք, նահանք՝ նրանք, հովաք՝ ովքեր, հոր՝ որ, հինչ՝ ինչ; հորտէ՝ որտեղ, քանինը՝ քանիսը, ուրուշ՝ ուրիշ, լոխ՝ բոլոր, քույունքը՝ քոնոնք,

սեռական-տրական՝ սահանց, տահանց, նահանց, հորին կամ հորտուրին, հինչի(ն), հորտէղի, քանինին, ուրուշի(ն), քույունքին։

Չհոլովվող դերանուններից են. էսա՝ այս, էտա՝ այդ, էնա՝ այն։

Անորոշ դերբայն ունի էլ, իլ, ալ, ալ վերջավորություններ, օրինակ՝ ասէլ՝ ասել, մէռանէլ՝ մեռնել, գիզիլ՝ գցել՝ ձգել, գնալ, գարդալ՝ կարդալ. անկատար դերբայը ներկայացնում է անորոշի ներգոյական ձևը, կազմվում է անորոշի, իբրև հիմքի վրա անկատարի ցուցիչի ավելացմամբ. այդ ցուցիչը ստանում է զանազան ձևեր՝ ում, ըմ, իմ, մ՝ ասէլըմ՝ ասում, գարդալիմ՝ կարդում և այլն, ընդ որում ա խոնարհման բայերը ունեն ըմ, ըս (-ալըմ, -ալըս), ա-ով բայերը՝ իմ, իս (-ալիմ, -ալիս), ե խոնարհման բայերը՝ ըմ, իմ, իս (-էլըմ, -էլիս). ձայնավորով սկսվող բառի կամ ձևի նախորդելիս դերբայական ս-ն ընկնում է և ստացվում է ի-ով վերջացող ձև՝ ուտէլի, գարդալի։

Ինչպես երկրորդական բաղադրյալ ժամանակների, այնպես էլ պարզ ժամանակների եզակի առաջին դեմքի համար գործածվում է ի(ս) վերջացող դերբայական ձևը՝ գարդալիս՝ կարդալիս, կարդում, գՕլիս՝ գալիս։ Իբրև անկատար դերբայ է գործածվում նաև անորոշի գործիական հոլովը. սրանով կազմվում են սահմանական ներկայի ու անցյալի շարունակական՝ ընթացական ձևեր. օրինակ՝ Յէս գիրՕլՕ յըմ՝ Ահա ես գրում եմ՝ գրելու վրա եմ։

Ապառնի դերբայը ունի ացուկ, ական, ման, ա, օ վերջավորություններ. էղանակային ձևերի համար ման վերջավորությունը հազվադեպ գործածություն ունի, նրանով կազմված ձևերը ավելի գործածական են որպես մակբայ։ Հարակատար դերբայը կազմվում է ած (աած) վերջավորությամբ, որի ծ-ն շրջուն շարադասության դեպքում ընկնում է. ենթակայական դերբայը կազմվում է օղ վերջավորությամբ, իսկ ընթացակցական դերբայը ներկայացնում է անորոշի բացառական ձևը։

Օժանդակ բայն ունի ներկայի և անցյալի ձևեր. (յ)ըմ, (յ)ըս, (յ)ի, (յ)անք կամ (յ)ա՛նք, (յ)ա՛ք կամ (յ)ա՛ք, (յ)ան կամ (յ)ա՛ն—էյի (էյ)իր, էր, (էյ)ինք, (էյ)իք, (էյ)ին. ներկայի ձևերում յ-ն ձայնակապ է, որով կապվում են ձայնավորով վերջացող բառը կամ ձևը հաջորդող օժանդակ բայի հետ. ա՛-ով ձևվեր ստացվում են ձայնավորների ներդաշնակության օրենքով. օրինակ՝ խինդալիմ ա՛ն՝ խնդում են, գարդալօ յանք՝ ահա կարդում ենք. սովորական շարադասության դեպքում ներկայի եզակի թվի ձևերի ը-ն սղվում է. օրինակ՝ հընցացունէլմ՝ անց կկացնեմ, երրորդ դեմքի ի-ն ջնջվում է, երբ նրան նախորդում է շեշտված բառ. օրինակ՝ վիր ունէլմ՝ վեր է ունում՝ վերցնում է։

Անցյալի ձևերում է հիմքը պահպանվել է համեմատաբար անվթար, իսկ ներկայի ձևերում այն փոխարինվել է ը-ով կամ ա-ով. վերջինս, ինչպես Շամախիի բարբառում, հանդես է գալիս ն-ից առաջ, իսկ երկրորդ դեմքում է>ա փոփոխությունը տեղի է ունենում մյուս դեմքերի համաբանությամբ։

Բարբառում առկա են երկու խոնարհում՝ ե և ա. հինգ եղանակ՝ սահմանական, հրամայական, ըղձական, պայմանական և հարկադրական. սահմանական եղանակն ունի ինը ժամանակ՝ ներկա, շարունակական ներկա, անցյալ, շարունակական անցյալ, ապառնի, անցյալ ապառնի, գերակատար, անցյալ գերակատար, անցյալ կատարյալ։

Ներկա ժամանակը կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, ընդ որում, եզակի առաջին դեմքի համար առնվում է իս (ի, ը) վերջացող դերբայը, իսկ մյուս դեմքերի և ամբողջ հոգնակի թվի համար՝ ըմ կամ իմ վերջացող դերբայը, օրինակ՝ Սամիս ըմ ուզէլիս՝ Մորս եմ ուզում, ասէլիս ըմ՝ ասում եմ. Ցէս ըմ գօլի՝ Ես եմ գալիս, բայց՝ ասէլըմ ի՝ ասում է, հավաքէլըմ ան՝ հավաքում են։

Անկատար ժամանակը կազմվում է ըմ վերջացող դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով. օրինակ՝ գնալըմ էյի, գարդալիմ էր։ Շարունակականը կազմվում է լա կամ լա՛, լօ կամ լօ՛ վերջացող անկատար դերբայով և օժանդակ բայի ձևերով. օրինակ՝ գնալօ յըմ, խինդալօ յանք։

Ապառնին կազմվում է ացուկ, ական վերջացող դերբայով և օժանդակ բայով՝ Խանավադի և Մամադթավայի խոսվածքներում, օրինակ՝ գնալացուկ ամ, ըս, ի, անք և այլն, գնալական ըմ, ըս, ի, անք, իսկ Հավարիկում և մյուս խոսվածքներում՝ ա-ով վերջացող դերբայով. օրինակ՝ գնալա յըմ, յըս, յը, յանք, յաք, յան։

Որոնումները ցույց տվեցին, որ վաղակատար և հարակատար ժամանակային ձևերը ինչ-որ ժամանակ տարբերակվել են. այդ են հաստատում ժխտական խոնարհման ձևերը. Ցէս չըմ գիրիլա. Մէնք չանք գիրիլա—չէյի գիրա, չէյինք գիրա. գիրած չըմ, գիրած չանք։

Հատկանշական է, որ դրական խոնարհման անցյալի ձևերը կազմելիս օգտագործվում է միայն հարակատար դերբայը, որի վերջնահանգ ծ-ն ընկնում է, անցյալ հարակատարի համար ավելի սովորական է իլա՝ եղած, եղել վերացական բայի հարադրությամբ կազմությունը։

Անցյալ կատարյալը և ըղձական ձևերը սովորական կազմություն ունեն. օրինակ՝ գնացի, գիդացան, կանչէց, տարավ. տիսանիմ՝ տեսնեմ, գիդանամ՝ գիտենամ։

Պայմանական եղանակային ձևերը կազմվում են անորոշ դերբայով և

օժանդակ բայով. Քու խաթրին մար հրդիքըս, ծրռէլ ըմ, մին քանի օր էլ հէտ ըմ ընդանէլ՝ Քո խաթեր համար ուղիս կծռեմ, մի քանի օր էլ կուշանամ։

Հարկադրականը կազմվում է ըղձական ձևերով և պիտէլիմ՝ պիտի եղանակիչով. օրինակ՝ պիտէլիմի գնամ՝ պիտի գնամ. հըրսանըք պիտէլիմ ՝ՐՐան՝ հարսանիք պիտի անեն։

Ժխտական խոնարհման վերլուծական ձևերում դերբայը սովորաբար նախադաս կիրառություն ունի, այսպես՝ գիրէլիս չըմ՝ չեմ գրում, գիրէլըմ չըս՝ չես գրում, գիրէլ՝ չի՝ չի գրելու, դիրած չէյի՝ չէի գրել, գիրէլ չըմ՝ չէի գրի. պարզ ձևերը կազմվում են դրական խոնարհման ձևերով և ոչ բառով. օրինակ՝ գիրէցի վոչ՝ չգրեցի, գիրըմ վոչ՝ չգրեի. արգելական հրամայականը կազմվում է մի(ր) -մՐՐ բառ-մասնիկով և անորոշ դերբայով, օրինակ՝ գիրէլ մի(ր) -գիրէլ մՐՐք, յէփիլ մի(ր) -յէփիլ մՐՐք։

Պատճառական բայերի ցուցիչն է ցուն՝ հընցացունէլ՝ անցկացնել, ապրացունէլ՝ ապրեցնել, նի սացունէլ՝ հասցնել։

Հարադիր բայերը խոնարհվում են սովորական ձևով. օրինակ՝ մուն տալ՝ մտնել, ներկա՝ մուն ի տալըմ, անկատար՝ մուն էր տալըմ, դերակատար՝ մուն ի տուված, անցյալ կատարյալ՝ մուն տուվէց. ըղձական՝ մուն տա։

Ամփոփելով մեր խոսքը, հարկ ենք համարում փոքր-ինչ անդրադառնալ Արեշի բարբառի դիրքին։

Արեշի բարբառը գիտությանը վաղուց հայտնի, բայց և այն եզակի բարբառներից է, որի տեղը քույր բարբառների շարքում դեռևս վերջնականապես ճշտված չէ. այսպես՝ Հ. Աճառյանը գրում է. «Բարբառս շատ կետերով նման է Ղարաբաղի, Ջուղայի և Շամախիի բարբառներին, բայց իր քերականական կազմությամբ անջատվում է բոլորից...

Սահմանական ներկայի ու անկատարի կազմության մեջ ոչ միայն ընդունում է Արդվինի բարբառի դրությունը, այլև մի քայլ ևս առաջ գնալով՝ -իս վերջավորության հետ դնում է նաև -ում. այսպես՝ գիրէլիս ըմ, խինդՐՐլիս ըմ, գիրէլըմ ըս, խինդՐՐլիմ ըս, դիրէլիմ ի, խինդՐՐլիմ ի». դերբայի կրճատված ձևով՝ գնալ ը յըմ, գնալ ը յըս, գնալ ը յի «միանում են այստեղ Երևանի բարբառի տալիս եմ, գալիս եմ, լալիս եմ ձևերի հետ նաև Նոր-Բայազետի ենթաբարբառի գալում եմ, տալում եմ, լալում եմ համապատասխան ձևերը»[6]։

Ա. Ղարիբյանը գտնում է, որ Արեշի բարբառը «մի շարք հատկանիշներով հիշեցնում է Ղարաբաղի բարբառը, բայց ավելի շատ հատկանիշներով՝ Ղարադաղի բարբառը». օրինակ՝ «ունի շարունակական [ժամանակ], որ կազմվում է Ղարաբաղի բարբառի նման անորոշ դերբայի գործիական հոլովաձևով» և ընդհակառակը, «բաղաձայնական սիստեմը եռաստիճան է, անտեղաշարժ է, այսինքն՝ «Ս» ճյուղի բարբառների մեծ մասի նման է», կը եղանակիչով պայմանական ժամանակաձևեր չի կազմում, այլ կազմում է անորոշ դերբայի օգնությամբ, կորցրել է վաղակատար ժամանակների ձևը և հարակատարն է օգտագործում նաև որպես վաղակատար։ Եվ այս բոլորից հեղինակը հետևցնում է. «այս բարբառը գաղթել է Ղարադաղից և ապա ընկել Ղարաբաղի և մասամբ Արարատյան բարբառի ազդեցության ներքո, ընդունել է «ՈՒՄ» վերջավորությամբ անկատար դերբայը կազմելու հատկությունը բոլոր դեպքերում, բացի առաջին դեմքից; որտեղ պահպանել է իր մայր բարբառի

6 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 358—359։

հատկությունը. գիրելիս ըս. գիրելում ըս և այլն»[7]։ Այսպես շարունակելով կարելի է Արեշի բարբառը կապել ոչ միայն հարևան Շամախիի, այլև հեռավոր Ջուղայի և մյուս բոլոր բարբառների հետ (օրինակ՝ ա ձայնավորի քմայնացմամբ Արեշը համընթաց է Դիադինի հետ և այլն)։

Մենք այս կարծիքին ենք, որ սոսկ լեզվական առտնձին իրողությունների ընդհանրություններով չի կարելի հավաստել արեշցիների՝ մերձարաքսյան կամ այլ տարածքներից գաղթելու փաստը, մանավանդ որ այդ մասին ստույգ տվյալներ չկան։ Միակ ստույգ փաստն այն է, որ Կոզեն գյուղից (Ադրբեջանական ՍՍՀ Թովուզի շրջան) մինչև Արեշ, Կուր գետի աշափնյա դաշտային ամբողջ տարածքում, խոսվել է նույն կամ շատ նման բարբառներով, որոնց ներկայացուցիչներն են Կոզենի ու Արեշի բարբառները։

Արեշը համընթաց է Կոզենի հետ ոչ միայն եռաստիճան անտեղաշարժ (գրաբարյան) բաղաձայնական համակարգով, ա ձայնավորի քմայնացման օրենքով, ը ձայնավորի գործածությամբ, գործիական հոլովի կազմությամբ և այլն, այլև՝ բնօրանով, ծագումով։ Սակայն Արեշի բարբառը յուրատիպ և ինքնուրույն է ոչ միայն սահմանական ներկայի կազմությամբ, այլև գոյական անունների հոգնակի թվի կազմությամբ, հարկադրական եղանակիչով, պատճառական ցուն||-ցուր ածանցով և այլն։

Ինչպես երևում է, միահատկանիշ դասակարգմամբ Արեշի և ընդհանրապես այս կամ այն բարբառի տեղը քույր բարբառների շարքում ստույգ կերպով որոշելը անհնար է կամ շատ դժվար. եթե միահատկանիշ ձևաբանական դասակարգմամբ Արեշի բարբառը՝ համադրելով ի(ա) և ում տարբերակիչ ճյուղային հատկանիշները, «գերբայավոր խմբի միջճյուղային» բարբառ է[8], ապա բաղաձայնական դասակարգմամբ եռաստիճան անտեղաշարժ (գրաբարատիպ) համակարգ ունեցող ճյուղակից բարբառ է. այլ խոսքով՝ նույն բարբառը մի դեպքում բոլորովին մենակ, մյուս դեպքում՝ խմբակից բարբառ է։

Բաղմահատկանիշ դասակարգումը, թերևս, ավելի ճիշտ է. դրանով Արեշի բարբառը արևելյան խմբակցության ծայր հյուսիսի ինքնուրույն բարբառներից է[9], որը սեբա շփումներ ունի ինչպես Կոզենի, Ղաբաղաղի ու մերձարաքսյան «Ս» ճյուղի բարբառների հետ, այնպես էլ «Ում» ճյուղի Շամախիի, Ղարաբաղի բարբառների հետ։

АРЕШСКИЙ ДИАЛЕКТ

РУБЕН БАГРАМЯН

Резюме

Арешский диалект—один из примечательных в ряду армянских диалектов. По системе взрывных согласных фонем он грабарского типа, а по закону палатализации гласного «а» вместе с диадинским диалектом составляет группу, переходную от грабара к группе юго-восточных диалектов. По форме образования настоящего времени изъявительного наклонения глаголов—это межвеетвенный диалект, т. к. для обра-

7 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 372—380։

8 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, էջ 23։

9 Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 136։

зования первого лица единственного числа употребляется причастная форма, оканчивающаяся на—*լրս* или *լի(ս)*, а для форм остальных лиц и чисел указанного времени—причастная форма, оканчивающаяся на *լրմ* или на *լի(մ)—ում* и *ս*.

Арешский диалект отличается также следующими особенностями: в нем развит закон сингармонизма гласных, множественное число как односложных, так и многосложных слов образуется с помощью частицы *եր*, все имена существительные в этом диалекте при склонении получают окончание *ի*. В диалекте есть продолжительное наклонение, временные формы условного наклонения образуются с помощью инфинитива и вспомогательного глагола, а принудительного наклонения—с помощью *պիտելիմ* и т. д.